


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013թ. հուլիսին


/վերլուծություն/

2013թ. հուլիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 17226 գործարքներ, որոնց քանակը 2013թ. հունիսի համեմատ աճել է 2.2%-ով, իսկ 2012թ. հուլիսի համեմատ՝ 22.6%-ով:

2013թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4567 օտարման գործարքների 75.6%-ը կազմել են առուվաճառքները, 23.5%-ը՝ նվիրատվությունները և 0.9%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 42.8%-ն

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 39.8%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2013թ. հուլիսին, 2013թ. հունիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 15.6%-ով, իսկ 2012թ. հուլիսի համեմատ՝ 15.1%-ով:

2013թ. հուլիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 61.2%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2013թ. հուլիսին, 2013թ. հունիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 21.7%-ով, իսկ 2012թ. հուլիսի համեմատ՝ 30.9%-ով:

2013թ. հուլիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հուլիս 2012թ.	հուլիս 2013թ.	հունիս 2013թ.
Կենտրոն	415050	428000	428000
Արաբկիր	342800	356500	355500
Քանաքեռ-Զեյթուն	270100	282300	282300
Նոր-Նորք	232050	251000	251000
Ավան	243000	259100	259100
Էրեբունի	238300	249000	249000
Շենգավիթ	238500	255000	254250
Դավթաշեն	263100	274500	274200
Աջափնյակ	229800	248000	247200
Մալաթիա-Սեբաստիա	228400	241000	240000
Նուբարաշեն	140200	152200	152000
Միջինը Երևանում /բացի Նորք- Մարաշից/	258300	272100	272000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. հուլիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. հուլիսի համեմատ, աճել են 0.04%-ով:

2013թ. հուլիսին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 416 բնակարաններ, որոնց քանակը, 2013թ. հունիսի համեմատ աճել է 27.2%-ով, իսկ 2012թ. հուլիսի համեմատ՝ 14.0%-ով:

2013թ. հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հուլիս 2012թ.	հուլիս 2013թ.	հունիս 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	112000	114800	114800
	Ապարան	49100	56550	56550
	Թալին	61100	64500	64500

Արարատ	Արտաշատ	92500	94800	94800
	Մասիս	109100	115000	115000
	Վեդի	97050	99800	99300
	Արարատ	74100	75100	75100
Արմավիր	Վաղարշապատ	153200	154000	154000
	Արմավիր	118000	121000	121000
	Մեծամոր	86200	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99000	99150	99150
	Գավառ	53600	59000	59000
	Մարտունի	105200	107600	107600
	Վարդենիս	36150	44500	44300
	Ճամբարակ	22000	28000	28000
Լոռի	Վանաձոր	87000	88400	88300
	Ստեփանավան	73900	74500	74500
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	51600	55000	55000
	Տաշիր	42850	47000	47000
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	19500	20100	20000
Կոտայք	Աբովյան	153000	155000	155000
	Նոր Հաճն	128200	128500	128500
	Բյուրեղավան	107100	108100	108100
	Եղվարդ	108500	109300	109300
	Հրազդան	60000	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292500	292500
	Չարենցավան	84000	85500	85500
Շիրակ	Գյումրի	108900	109300	109300
	Արթիկ	64300	66500	66300
	Մարալիկ	36400	40100	40100
Սյունիք	Գորիս	115000	121500	121000
	Կապան	90100	92100	92100
	Սիսիան	81400	91100	91100
	Մեղրի	68000	80050	80050
	Ագարակ	42400	46200	46000
	Քաջարան	94100	94500	94300
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	85500	95000	95000
	Եղեգնաձոր	117500	124400	124100
	Ջերմուկ	102600	112050	112050
Տավուշ	Դիլիջան	104000	113100	113100
	Իջևան	114000	118100	118100
	Բերդ	51200	60000	60000
	Նոյեմբերյան	41500	49300	49300
	Այրում	24500	31600	31500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. հունիսի համեմատ աճել են 0.06%-ով:

2013թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 444 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 129, մարզերում միասին վերցրած՝ 315: 2013թ. հուլիսին, 2013թ. հունիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 4.5%-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 0.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 6.8%-ով: 2012թ. հուլիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 18.4%-ով, ընդ որում Երևանում՝ 3.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 26.0%-ով:

2013թ. հուլիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները/դրամ/		
	հուլիս 2012թ	հուլիս 2013թ.	հունիս 2013թ.
Կենտրոն	463800	476100	476100
Արաբկիր	369600	383000	383000
Քանաքեռ Ձեյթուն	280500	295000	295000
Նորք Մարաշ	307100	319200	319200
Ավան	260400	270500	270500
Էրեբունի	228800	239500	239500
Շենգավիթ	245100	255000	255000
Դավթաշեն	263800	276000	276000
Աջափնյակ	239600	250050	250050
Մալաթիա Սեբաստիա	228000	238000	238000
Նուբարաշեն	144500	150500	150500
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	275600	286600	286600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. հուլիսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. հուլիսի համեմատ մնացել են անփոփոխ:

2013թ. հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հուլիս 2012թ	հուլիս 2013թ.	հունիս 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	133100	136200	136200
	Ապարան	53050	60000	60000
	Թալին	68650	69250	69250
Արարատ	Արտաշատ	98250	100000	100000
	Մասիս	111500	115100	115100
	Վեդի	100200	102300	102300
	Արարատ	87250	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	152000	153100	153100
	Արմավիր	104000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94100	94800	94800
	Գավառ	52100	57100	57100
	Մարտունի	93000	96000	96000
	Վարդենիս	34000	41000	41000
	Ճամբարակ	25900	31100	31100
Լոռի	Վանաձոր	98000	100000	100000
	Ստեփանավան	87550	90000	90000
	Սպիտակ	113250	114000	114000

	Ավազերդի	46600	50200	50200
	Տաշիր	50200	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	13200	14000	14000
	Ախթալա	29400	30000	30000
Կոտայք	Աբովյան	153500	157000	157000
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	119900	120500	120500
	Եղվարդ	115350	116100	116100
	Հրազդան	79000	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	82200	83000	83000
Շիրակ	Գյումրի	117200	118500	118500
	Արթիկ	61000	63100	63100
	Մարալիկ	49000	52000	52000
Սյունիք	Գորիս	126900	130000	130000
	Կապան	98200	100000	100000
	Սիսիան	89600	96500	96500
	Մեղրի	76200	84500	84500
	Ագարակ	46000	46900	46900
	Դաստակերտ	11600	11610	11610
Վայոց Ձոր	Վայք	83500	90000	90000
	Եղեգնաձոր	112000	116600	116600
	Ջերմուկ	121800	131200	131200
Տավուշ	Դիլիջան	107000	113000	113000
	Իջևան	121000	123100	123100
	Բերդ	57700	60000	60000
	Նոյեմբերյան	46050	48200	48200
	Այրում	34200	36200	36200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. հուլիսի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2013թ. հուլիսին հանրապետությունում օտարվել են 1498 միավոր /752.19 հա/ հողեր, որից Երևանում՝ 165 միավոր /19.51 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 860 միավոր /694.55 հա/, որից Երևանում՝ 8 միավոր /13.20 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 426 միավոր /33.79 հա/, որից Երևանում՝ 77 միավոր /2.38 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 176 միավոր /8.12 հա/, որից Երևանում՝ 73 միավոր /3.51 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 17 միավոր /9.00 հա/, որից Երևանում՝ 7 միավոր /0.42 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 10 միավոր /6.06 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 9 միավոր /0.67 հա/ ընդհանուր մակերեսով:

2013թ. հուլիսին հանրապետությունում օտարված հողերից 1262 միավորի /667.49 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 144 միավոր /6.51 հա/, նվիրատվության գործարքներ՝ 218 միավորի /82.72 հա/, որից Երևանում՝ 19 միավոր

/12.83 հա/ և փոխանակության գործարքներ՝ 18 միավորի /1.98 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.17 հա/:

Հանրապետությունում 2013թ. հուլիսին, 2012թ. հուլիսի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 8.0%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 13.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 3.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 37.8%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 267.51 հա, որից 262.49 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 21.2%-ը կամ 268 գործարքներ /82.29 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 81 միավոր /1.99 հա/, իսկ 78.3%-ը կամ 988 միավորը /581.19 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 63 միավոր /4.52 հա/: 2013թ. հուլիսին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 6 գործարք /4.01 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2013թ. հուլիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	2	0.09	28	0.21	51	1.69	6	1.02	5	0.33	40	1.95	12	1.22
Արագածոտն	13	11.95	1	0.06	1	0.12	7	0.17	85	45.87	0	0.00	17	1.95	1	0.002
Արարատ	3	4.17	1	0.04	1	0.01	8	0.10	59	21.86	0	0.00	32	2.86	4	0.11
Արմավիր	7	15.07	0	0.00	1	0.20	9	0.37	78	247.42	0	0.00	45	4.45	0	0.00
Գեղարքունիք	3	1.58	0	0.00	6	0.53	8	1.16	225	89.64	0	0.00	11	1.40	2	0.09
Լոռի	1	0.50	1	0.01	12	0.44	5	0.04	35	24.44	0	0.00	17	2.23	0	0.00
Կոտայք	9	30.32	1	0.01	29	1.32	17	0.50	90	44.39	1	5.90	85	6.94	11	0.78
Շիրակ	3	1.24	0	0.00	4	0.20	5	0.25	22	29.27	0	0.00	13	1.84	4	0.07
Սյունիք	0	0.00	4	2.45	0	0.00	2	0.01	18	17.10	0	0.00	2	0.10	1	0.08
Վայոց Ձոր	10	5.81	0	0.00	0	0.00	2	0.01	18	11.81	0	0.00	5	0.62	0	0.00
Տավուշ	1	0.21	0	0.00	1	0.06	3	0.54	23	8.79	1	0.11	9	0.68	0	0.00
Ընդամենը	50	70.85	10	2.66	83	3.09	117	4.84	659	541.61	7	6.34	276	25.02	35	2.35

Ստորև ներկայացվում է 2013թ. հուլիսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյուն ար օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակա կան կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակա կան կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	56	0.98	2	0.09	28	0.21	26	0.68	25	1.01	0	0.00	0	0.00	0	0.00	25	1.01
Արագածոտն	5	0.12	0	0.00	0	0.00	5	0.12	10	8.16	6	7.94	1	0.06	1	0.12	2	0.04
Արարատ	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	12	4.31	3	4.17	1	0.04	1	0.01	7	0.09
Արմավիր	3	0.14	0	0.00	0	0.00	3	0.14	14	15.50	7	15.07	0	0.00	1	0.20	6	0.23
Գեղարքունիք	2	0.13	0	0.00	0	0.00	2	0.13	14	1.92	2	0.36	0	0.00	6	0.53	6	1.03
Լոռի	2	0.003	0	0.00	1	0.002	1	0.001	16	0.49	0	0.00	1	0.01	11	0.44	4	0.04
Կոտայք	4	0.14	0	0.00	2	0.07	2	0.07	52	32.01	9	30.32	1	0.01	27	1.25	15	0.43
Շիրակ	1	0.04	0	0.00	0	0.00	1	0.04	11	1.65	3	1.24	0	0.00	4	0.20	4	0.21
Սյունիք	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	5	2.454	0	0.00	4	2.45	0	0.00	1	0.004
Վայոց Ձոր	1	0.005	0	0.00	0	0.00	1	0.005	11	5.814	10	5.81	0	0.00	0	0.00	1	0.004
Տավուշ	1	0.30	0	0.00	0	0.00	1	0.30	4	0.52	1	0.21	0	0.00	1	0.06	2	0.25
Ընդամենը	77	1.88	2	0.09	31	0.28	44	1.51	174	73.84	41	65.12	8	2.57	52	2.81	73	3.34

2013թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 9 գործարք /5.74 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2013թ. հուլիսին, 2012թ. հուլիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 13.7%-ով: Ընդ որում, Երևանում՝ աճել է 47.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել է 19.1%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 14.6%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 13.3%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 9.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 33.3%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. հուլիսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	4	4.44	22.3	396.0	198.7	58	13.09	365.0	12000.0	3640.0
Ապարան						8	5.07	86.5	2727.3	745.0
Թային	2	3.50	37.8	37.8	37.8	9	11.89	93.6	5494.5	675.3
Ծաղկահովիտ						7	13.31	79.5	1000.0	281.0
Արարատի մարզ										
Արտաշատ						23	6.61	335.1	10833.3	2781.0
Մասիս	1	0.17	202.8	202.8	202.8	23	9.79	200.0	11904.8	3078.4
Վեդի	2	4.00	33.3	60.0	46.7	12	4.99	207.0	10795.1	1825.3
Արմավիրի մարզ										
Արմավիր						34	23.05	294.3	9090.0	1310.8
Բաղրամյան	5	13.95	70.9	70.9	70.9	12	191.13	90.6	2561.1	765.3
Վաղարշապատ	2	1.12	70.5	318.4	194.5	29	27.12	444.4	11764.7	2310.0

Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	0.02	700.0	700.0	700.0	212	61.03	199.8	1875.0	428.5
Ճամբարակ	1	0.34	479.6	479.6	479.6	3	2.35	60.5	953.3	355.2
Մարտունի								51.1	2850.0	738.5
Սևան						1	0.31	52.2	2134.8	318.5
Վարդենիս						9	25.95	41.2	2575.1	421.3
Լոռու մարզ										
Ալավերդի						5	1.96	170.4	6424.2	585.3
Գուգարք						10	2.25	234.6	6065.9	768.0
Սպիտակ								250.0	5555.5	730.8
Ստեփանավան						9	8.96	90.6	1686.6	328.0
Տաշիր						11	11.27	45.3	1384.4	159.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	1	1.20	129.2	129.2	129.2	41	22.10	279.3	11942.7	4300.0
Եղվարդ	6	28.70	68.9	103.4	84.0	32	13.11	174.4	11971.8	2540.0
Հրազդան	2	0.42	587.5	1100.0	843.8	17	9.19	130.5	10256.4	1585.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	3	1.24	66.1	687.5	293.2	5	6.23	252.0	1693.1	632.0
Ամասիա						1	5.77	40.9	261.0	125.5
Անի						8	7.14	110.6	546.9	390.0
Աշոցք						7	9.55	58.5	215.8	128.3
Արթիկ						1	0.58	79.4	1428.6	420.0
Սյունիքի մարզ										
Գորիս						2	3.60	92.6	1023.2	730.0
Կապան						4	1.42	120.0	841.6	365.5
Մեղրի								193.0	3000.0	732.7
Սիսիան						12	12.08	46.3	1977.4	550.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	10	5.81	35.4	316.3	93.5	10	4.32	125.0	10000.0	1925.0
Վայք						8	7.48	58.8	1430.7	635.5
Տավուշի մարզ										
Բերդ						11	2.81	213.3	3783.8	685.5
Իջևան	1	0.21	550.0	550.0	550.0			267.5	9454.5	1245.2
Նոյեմբերյան						11	5.00	46.7	7368.4	890.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. հուլիսին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մասվելագույն	Միջին			Նվազագույն	Մասվելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	1200.0	112.7	112.7	112.7	14	15111.0	130.7	22200.0	2580.0
Ապարան						2	3167.0	124.1	609.6	390.0
Թային						1	1200.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ								60.0	214.3	91.5
Արարատի մարզ										
Արտաշատ						11	12370.0	173.9	7140.3	897.0
Մասիս	1	67.0	1123.4	1123.4	1123.4	17	10006.4	187.5	25000.0	1208.0
Վեդի						4	6190.0	126.1	5000.0	661.0

Արմավիրի մարզ										
Արմավիր						20	20525.0	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան								100.0	833.3	240.0
Վաղարշապատ	1	2000.0	95.9	95.9	95.9	24	22635.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						2	3120.0	186.6	1084.3	683.3
Ճամբարակ								71.3	2286.2	148.1
Մարտունի	5	5174.0	219.8	330.0	263.9	6	7295.0	119.3	5000.0	283.0
Սևան						2	2625.0	240.0	3110.4	315.0
Վարդենիս	1	151.6	1200.0	1200.0	1200.0	1	1000.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի	2	116.0	778.8	1650.0	1214.4	3	4050.0	114.3	1388.9	216.7
Գուգարք	7	1935.2	2009.7	3234.0	2428.4	7	10589.7	77.9	14083.3	1260.2
Սպիտակ	2	2337.0	260.7	677.3	469.0	1	2250.0	104.9	1348.3	206.5
Ստեփանավան						5	3917.3	88.2	1666.7	175.5
Տաշիր						1	1490.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	21	5586.2	275.5	5672.2	3752.0	40	36098.1	264.5	35353.5	1991.0
Եղվարդ	5	6465.0	244.2	266.4	259.7	35	27416.0	173.6	27000.0	2855.5
Հրազդան	1	409.0	4750.0	4750.0	4750.0	9	5735.5	117.7	34848.5	1317.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	100.0	2500.0	2500.0	2500.0	4	1518.0	113.6	18750.0	334.5
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						1	1134.0	67.9	180.6	175.1
Աշոցք						2	10300.0	40.8	144.0	63.2
Արթիկ	3	1917.5	279.2	648.3	405.8	5	4958.0	111.8	5000.0	217.3
Սյունիքի մարզ										
Գորիս								112.2	1700.0	368.0
Կապան								67.9	2638.9	302.0
Մեղրի						2	970.0	68.5	632.9	215.0
Սիսիան								123.5	875.0	209.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						4	3932.4	96.7	7659.6	505.8
Վայք						1	2280.0	120.7	1448.3	225.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	1151.0	75.8	810.0	118.5
Իջևան	1	615.0	3000.0	3000.0	3000.0	4	1952.0	74.1	14423.1	518.5
Նոյեմբերյան						4	3731.9	125.0	1948.1	230.0

2013թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 756 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.4%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 68.8%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2013թ. հուլիսին, 2013թ. հունիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 6.6%-ով, իսկ 2012թ. հուլիսի համեմատ՝ աճել 10.0%-ով:

2013թ. հուլիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 55 բնակարանների, 72 անհատական բնակելի տների, 331 հասարակական, 93 արտադրական նշանակության օբյեկտների, 186 հողերի և 19 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2013թ. հուլիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 8 վարձակալության գործարքների, այդ թվում 1 միավոր /0.12 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2013թ. հունիսի համեմատ նվազել է 27.3%-ով, իսկ 2012թ. հուլիսի համեմատ՝ մնացել է անփոփոխ: 2013թ. հուլիսին հանրապետությունում վարձակալված 424.02 հա հողերից 1.51 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 422.51 հա հողերից 389.57 հա կազմում են գյուղատնտեսական

նշանակության, 1.39հա արդյունաբերական օբյեկտների, 0.01հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արագածոտնի մարզում՝ 289.73 հա, որից 265.72 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2185 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.7%ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. հունիսի համեմատ նվազել է 2.5%-ով, իսկ 2012թ. հուլիսի համեմատ աճել՝ 6.2%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /54.5%/, առանձնատների /21.0%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.7%/ և հողերի /7.7%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1329 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. հունիսի համեմատ աճել է 6.1%-ով, իսկ 2012թ. հուլիսի համեմատ՝ 15.1%-ով:

2013թ. հուլիսին հանրապետությունում գրավադրվել են 300.69 հա հողեր, որից 20.20 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 85.6%-ը կամ 257.54 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 148.74 հա, որից 148.51 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. հուլիսին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 199 գործարքներ, որից 146-ը՝ Երևանում: 2013թ. հունիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 10.6%-ով, ընդ որում Երևանում՝ 11.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 8.2%-ով: 2012թ. հուլիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 16.4%-ով, ընդ որում Երևանում՝ 47.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 26.4%-ով:

2013թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1730 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2013թ. հունիսի համեմատ նվազել է 4.5%-ով, իսկ 2012թ. հուլիսի համեմատ՝ 3.0%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 10.0%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /35.1%/:

« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե